



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՈՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՌԱՍՏՈՐԻ ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՈՆԻԱ ԴԱՐԱՐ 18 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1876

ԹԻՒ 1049

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մասնաւոր հաշտութեան յոյսերն երթալով կաւերան, փարիզի դաշնադրութեան ստորագրող մեծ տէրութիւնքն միաբանութեամբ կաշխատին կարգադրելու զպայմաններն, որոց վերայ պիտի հիմնուի տեղական խաղաղութիւն մի, զոր նախ Սերվիան յատուկ աղերսագրով մի խնդրեց եւրոպայէն, որ բարեխօս լինի առաջի բարձրագոյն Դրան: Օսմանեան կայսերական կառավարութիւնն առանց ուշադրութիւն մատուցանելու իւր զինուորական զօրութեանց յառաջագոյն բնիկացիին Սերվիոյ մէջ, սիրով ընդունեցաւ զխաղաղասիրական առաջարկութիւնն մեծ տէրութեանց, իմացոյց նուցա իւր խնդրած պայմաններն վասն հաշտութեան, և միանգամայն նոցա արդարասէր տընորէնութեանցը յանձնեց զկատարեալ ընդունելութիւնն կամ զբարեփոփոխութիւնն նոյն պայմանաց: Բայց յայմանէ կերկի թէ Բարձրագոյն Դուռն, որ մեծ վստահութիւն ունի Անգլիոյ կառավարութեան բարեկամական արդարացի զգացմանց վերայ, մասնաւորապէս յանձնեալ է նմա կարգադրել զյիշեալ պայմանն: Բանգի Մեծին Բրիտանիոյ առաջին նախարար Տիլդրայէի կոմսն բարդմէնթին մէջ պաշտօնական կերպիւ յայմանեց թէ Թուրքիան Անգլիոյ զահելին կը յանձնէ խաղաղութեան պայմաններն որոշելու հոգս:

Մեր յառաջ բերած այս եղելութիւններէն կը տեսնուի թէ մօտաւոր հաշտութեան գործն յաջող չաւելի մը մէջ կը պնտուի: Նոյն իսկ Բէրլինի պայմանագրի լրագրութեամբ որք կը քանդուան զհամաձայնութիւնն մեծ տէրութեանց վասն հաստատուն պահելոյ իսկապէս իւրեան եւրոպայի, միանգամայն իրենց վստահութիւնը և զոչուհակութիւնը կը յայտնեն այս խաղաղասիրական համաձայնութեան վերայ:

Ռուսի Բարձրագոյն Դուռն, շատ չանցած ազատ լինելով ի պատերազմական զբաղմանց, իւր մարդասիրական ծանր ուշադրութիւնը պիտի դարձնէ ի վերայ ներքին վարչութեան զանազան կարեւոր բարեկարգութեանց, զորս օգոստոս Սուլթանն բարեհաճեցաւ ընդարձակ կերպիւ յառաջ բերել իւր գահակալութեան բարեպատեհ առթիւ հրատարակեալ խաթիբի Հիւմայունէն մէջ:

Ահաւասիկ այս բարձր հրամանագիրն. որոյ զթարգմանութիւնն ի ՄԱՍԻՍ լրագրէն քաղելով կը հրատարակեմք, մասնաւորապէս ի տեղեկութիւն մեր հեռաւոր բնիկացիաց:

Եթէ մեծաւ զէղիւր, Մէհմէտ Բեկի փաշա, Վեր սիրելի եղբայրք, Սուլթան Մուրատ Ե. Նախախնամութեան կամօք Պետութեան երասանակները ձեռքէն թողլու և խախտելու հրաժարելու պարտաւորուելով, ըստ Օսմանեան օրինի մեր նախահարց գահն երանք:

Չեր ծանօթ և փորձեալ չայրենասիրութիւնն և Պետութեան մեծամեծ շահուց կատարեալ խելամուտութիւնը զիմանալով, զհեզ կը վերահաստատենք Մեծ—Եղարգոսութեան և Նախարարաց խորհրդոյ նախագահութեան բարձր պաշտօնին մէջ: Նմանապէս բոլոր նախարարներն և պաշտօնատարները կը վերահաստատենք իրենց պաշտօնին մէջ:

Բարձրելոյն օգնութեանն ու օժանդակութեան վրայ մեր փառհաւատքն անսահման է ամեն բանի և ամեն պարագայի մէջ: Մեր միակ փառհաւատքն ու փառհաւատքն է Վեր տէրութեանը, և ազատութեան անդորրութեանն ու արդարութեան բարիքն, առանց բացառութեանք Մեր ամեն հայտակաց վայելել տալ: Քաջայայտ և աներկմիա ենք որ Մեր տէրութեան նախարարներն և ամեն պաշտօնատարներն ալ մեր օրինակին հետեւելով այս բաղձանաց կատարմանը պիտի գործակցին:

Մեր տէրութեան ներկայ տաղմադարից փոփոխ արդարեւ բազմաթիւ պատճառներէ յառաջ եկած է, բայց այն պատճառներն որ կող-

մէ որ եկաւ միակ կէտի մը վրայ կորովանալով, այն է Մեր աւստրիական հիմն եղող Շէրի գերագոյն պատուիրաններէն բղբեալ օրինաց թերի գործողութիւնն, և վարական գործող մէջ իւրաքանչիւրն անձնական հաճոյքն իրեն կանան բռնուիլը:

Եւ արդարեւ մեր երկրին եւրոպայի մատակարարութեան մէջ ժամանակէ մ'ի վեր սիրած անկանոնութեանց այս տատնան միմայր, մեր վարկին վրայ հասարակային կարծեաց սոսկա հաւելութեամբ, մեր դատարանաց տակաւին անհատական իրաւունքներն ապահովելու կարող չլալ, մեր երկրին հանրամասն քնակաւ տընորէնութեան և յարմարութեանց հակառակ հասարակաց հարստութեան և բարօրութեան արգաւանդ աղբիւրներն եղող երկրագործութեան, արուեստից և վաճառականութեան յետեւալ վիճակը, վերջապէս թէ երկրին շահուն համար և թէ առանց բացառութեան իմ ամեն հայտակայն անհատական ազատութեան պահովելու անկողմ նպատակաւ ձեռք առնուած միջոցներուն շարունակեալ փոփոխութեանց պատճառաւ հաստատութիւնը չգտնելն և առաջարկեալ նպատակին չհանդիպել, այս ամենն ալ օրինաց կանոնաւորապէս և յարատեւութեամբ չգործողութեան է, յառաջ եկած են: Ռուսի, նախապէս ձեռք առնուելիք միջոցներուն գլխաւոր նպատակը պիտի ըլլայ երկրին օրէնքներն ու կանոններն հասարակաց վստահութիւն աղբիւր հիմանց վրայ զետեղել:

Ասոր համար անհրաժեշտ հարկ է բնդ հանուր ժողով մը հաստատել, որոյ գործերը կատարեալ պատշաճութեամբ ազգեւորապէս և կառավարականութեանց յարմարիւ: Այն ժողովին պաշտօնը պիտի ըլլայ արդէն կեցած օրինաց ինչպէս նաեւ Շէրի տրամադրութեանց և երկրին ու ազգին ճշմարիտ և արդար պիտոյից համեմատ հրատարակուելիք օրինաց հաստատութիւն գործողութեանն առանց բացառութեան, երաշխաւորել, և տէրութեան եւրոպայի հաւասարակշռութեան վրայ հակել:

Նախարարաց խորհրդոյն յանձնուած է այս կարեւոր խնդիրն հասուն կերպիւ ընել, և իւր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՑՆԵԿ ԳԼԽՈՑ

- Ձեռագիր ընդդէմ Պատմութեան Երեւոյն (1)
- Չոր քրեաց պատուելի Տիգրան Զ. Թ. Կաթողիկոսեանց զի ունայի՝ նախկին պատառն ժողովարարաց զպրքի և նախկին քարտուղար Պատրիարքարանի պրքաց Յակոբեանց վանացն Ս. Երուսաղեմի:
- (Շարունակութիւն: Տես 1047 և 1048 քիւսն):
- ԳԼԽԻՐ Գ.
- Ի սկզբնաւորութեան առաջին խաղաղութեան միջեւ, ցառուամն Եւ ուսողներ ի Սալաւատեան. (1095—1187):
- ԳԼ. Ա. Ի սկզբնաւորութեան Ա. խաղաղութեան, նշեւ ցտիւրել իրաւաստէմի Գաղափրուայ Բուլլանի. (1095—1099):
84. Պետրոս անապատական, որ եղև պատճառ Ա. խաղաղութեան: Սիմէան Պատրիարք, Խոսք Ուրբանոսի Պապի ի ժողովին Գլխումայ: Ձին ուղեւալք յԱ. խաղաղութեան, և հանգ ամանք խորհրդոյ նոյն. (1095):
85. Չու խաղաղութեան անակն առաջնորդութեամբ Պետրոսի: Կատրամ Զրէից: Բախումն նոցա ընդ Թուրքաց, և կատրումն. (1096):
86. Երկրորդ արշաւան խաղաղաց առաջնորդ:
- (1) Այս ձեռագիր պատուական մատենան՝ գոր կը փոխաբերէր ի լոյս ընծալեալ տեսակէն զնորիս ազգային բարեբարի միայ, բաղկացեալ է ի քառաձայ 1311 երեսաց և բաժանեալ յաթ գիրքս:

- Գ. խաղաղութեան և անգործութեան: Կաղմութիւնն բանակի նորա: Այլքս կայսր ահաբեկի և խորհի ի նեղութիւն: Հասանէ բանակն ի Նիկիա: առնու զայն պատերազմաւ: Նեղութիւնք խաղաղաց ի ճանապարհին: մուտ նոցա յԱնտիպ: Պիտիգեայ: Առումն քաղաքաց քաղաքաց կիւրիկիւր: Բողունէ արիւն Եգիպտոյ: Օգնեն խաղաղաց իշխանք Հայոց: (1097):
87. Տաղնալ խաղաղաց: Գեոպանախօսութիւն ընդ խաղաղային եգիպտոսի: Առումն Անտիպայ մատնութեամբ: Քերպոյա պաշարէ զԱնտիպ: Իբումն պաշարելոց ի սովէ: Խաղաղութիւնն սուտ գեղարդանէ: Յաղթութիւնն նոցա, և դարձ գեոպանայ յեգիպտոսէ: Չու խաղաղաց և մօտել նոցա յԵրուսաղէմ: (1098—1099):
- ԳԼ. Բ. Յառմանէ Երուսաղէմի մինչև ցման Գողգոթայ:
88. Պաշարումն և առումն Երուսաղէմի: Կոտորած Մահմէտականաց: Գողգոթայ ընտրի ի թաղաւոր: (1099):
89. Մթութիւն վիճակի Հայ միաբանութեան: Գրիգոր վկայատէր: Պայծառութիւնն եկեղեցեաց: Ողբ Մահմէտականաց: Հանգ իւրել խաղաղաց ընդ զօրս եգիպտացւոց առ Ասկաղոնեաւ, և պարտութիւնն նոցա: (1099):
90. Նոր աշխարհակալութիւնք: Գեոպեա Պատրիարք: Հաստատութիւնք օրինաց սուրբ փաղաքին: Մահ Գողգոթայ: (1100):
- ԳԼ. Գ. Ի մահուանէ Գողգոթայ մինչև ցերեկորդ խաղաղութիւն: (1101—1145):
91. Բողոքն Ա. յաջորդէ զԵղբայր իւր: ար-

- շաւանք նորա: վեհանձնութիւն: Սրբազան լոյսն: Վտանգ Բողոքն ի Ռամա: առնու բղ- Պաղովայիդ, և ազատէ զՅոպպէ: 1011—1107):
92. Առումն Տրապոլոյ: Բերիտոնի և այլոց քաղաքաց: Այրումն Տրապոլոյ: Արշաւանք Սկիւթացւոց: սասանութիւնք երկրի: Դաշնաւորութիւն իշխանին Դամասկոսի ընդ քրիստոնէից: Արշաւանք Բողոքն յԱրարիա և յԵգիպտոս: մահ նորա: 1108—1116):
93. Գողգոթին Բ. Պատերազմ ի վերայ Անտիպայ: Գեոպութիւն Բողոքն ի Գաղութիւն յիսնից Հայ պատանեաց: չարամահ սպանումն նոցին: Առումն Տիւրքի: Աղաւաղութիւն Բողոքն ի Թիւրքի: և բարեկամք թաղաւորութեան: Երուսաղէմի: Այլեւայլ կարգք հաստատեալք առ խաղաղութեամբ: Մահ Բողոքն: (1117—1131):
94. Փոլիսն աւանտ յաջորդէ զաթոն: Լեւոն Ա. և Պետիւն: Հուկէս ամբաստանի առաջին փաղկոսի: Յովհաննէս Կոմնենոս ջախջախիւր Անտիպայ, և դաշնակցի ընդ լատինս: Ժողովք Անտիպայ և Երուսաղէմի, յորս դաւանի և Գրիգոր Պաշտօնունի: Մահ Փոլիսի: (1131—1132):
95. Բողոքն Գ. Կորանք նորա առաջին Բողոքայ: Աւերումն Եգիպտոյ յիսլամաց: (1132—1135):
- ԳԼ. Դ. Երկրորդ խաղաղութեան մինչև ցառումն Երուսաղէմի ի Սալաւատեան: (1145—1187):
96. Երկրորդ խաղաղութեան: Նեղութիւնք և բեկումն նոցա ի դաւադրութեան Թուրքաց: Կաշարումն Դամասկոսի: Դարձ նոցա յԵրուսաղէմ: Գիտութիւնք Բողոքն ընդ մօր իւրում: 1145—1149):

